

Արձանագրություն N5

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի

24.02.2017թ. նիստի

Օրակարգ

1. Պետական քննությունների անցկացման ընթացքի հետ կապված հարցերի քննարկում:
2. 2016-2017 ուս. տարում ամբիոնների կատարած աշխատանքների վերաբերյալ ամբիոնների վարիչների հաշվետվությունները /Շ. Բաղդասարյան, Ա. Առաքելյան/:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 60 անդամներից 42-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝
Դեկանը ներկայացրեց ուսանողների գնահատականների ընդհանուր պատկերը, հորդորելով ամբիոնների վարիչներին վերահսկել քննությունները, քանի որ գնահատականները կարծես ուռճացված, արհեստականորեն բարձրացված լինեն: Դեկանը հրահանգեց քննություններն անցկացնել հանձնաժողովով, հետևել տվյալ կուրսի ուսանողների առաջադիմության ընդհանուր պատկերին:

ԱՐՏՍԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝
Ս. Գասպարյանը նշեց, որ թերացումներն ու գնահատականների արհեստական բարձրացումներն անընդունելի են, և ուսանողների գնահատման միակ սկզբունքը պետք է օբյեկտիվությունը լինի:

2. ԼՍԵՑԻՆ՝
Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ Շ. Բաղդասարյանը և Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Ա. Առաքելյանը ներկայացրեցին 2016-2017թ. իրենց վստահված ամբիոններում կատարված աշխատանքների հաշվետվությունները:

Շ. Բաղդասարյանը զեկուցեց, որ ամբիոնն ակտիվորեն աշխատում է երեք լեզուների դասավանդման ընթացքում հաղորդակցական ճիշտ հիմք ապահովելու ուղղությամբ: Ամբիոնը պատրաստվում է ներմուծել նոր մագիստրոսական ծրագիր՝ միջմշակութային հաղորդակցություն /իսպաներեն/ և միջմշակութային հաղորդակցություն /իտալերեն/: Ամբիոնն անցկացրել է տարբեր սեմինարներ, դասախոսություններ, որոնց շարքում հատկապես կարևորվում է Հայդելբերգի համալսարանի պրոֆ. Վահրամ Աթայանի կորպուս լեզվաբանության վերաբերյալ դասախոսությունների շարքը: Հաշվետու ժամանակաշրջանում պաշտպանվել է մեկ թեկնածուական ատենախոսություն, հրատարակման են պատրաստվում նոր դասագրքեր: Ամբիոնն ակտիվորեն համագործակցում է Բոտալիայի, Իսպանիայի, Պորտուգալիայի համալսարանների հետ: Ամբիոնում լավ ավանդույթ է դարձել միջազգային գիտաժողովների անցկացումը: Քանի որ ուսումնական տարին դեռևս չի ավարտվել, կան կարևոր աշխատանքներ, որոնք գտնվում են իրականացման ընթացքում: Ամբիոնի կարևորագույն խնդիրների շարքին է պատկանում դիմորդների անընդմեջ պակասող քանակը:

Ա. Առաքելյանը զեկուցեց, որ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում բազմաթիվ աշխատանքներ են իրականացվել: Ընդհանուր առմամբ ուսումնական և գիտական գործունեությունը ընթանում է նորմալ հունով, ամբիոնային կյանքը աշխատանքային է: Պաշտպանության է պատրաստվում երկու թեկնածուական ատենախոսություն: Ամբիոնը համագործակցում է Գրանադայի համալսարանի հետ, մարտի 13-ին պատրաստվում է անցկացնել Վ. Սարոյանին նվիրված գիտաժողով: Ամբիոնի դասախոսները ակտիվորեն մասնակցում են ոչ միայն տեղական, այլև արտերկրյա գիտաժողովներին: Ներկայումս կա մեկ խնդիր, այն է՝ 4-րդ կուրսի ուսումնական ծրագրից անհրաժեշտ է հանել մեթոդիկայի կուրսային աշխատանքը:

ԱՐՏՍԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ի պատասխան Ա. Առաքելյանի արտգրականության ուսումնական ծրագրից մեթոդիկայի կուրսայինը հանելու առաջարկին, դեկանը տեղեկացրեց, որ դրա վերաբերյալ արդեն որոշում է կայացված և այդ կուրսայինը հաջորդ ուսումնական տարում արդեն չի լինելու:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Դրական գնահատել Ռոմանական բանասիրության ամբիոնի և արտասահմանյան գրականության ամբիոնի հաշվետու ժամանակնաշրջանում կատարված աշխատանքները:

3. ԸՆԹԱՑԻՎ ՀԱՐՑԵՐ

Որոշեցին՝

- Հաստատել արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ Անի Ներսեսյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «Նիլ Սայմոնի կատակերգությունները»՝ Ժ.01.07 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել Բ.Գ.Պ., դոց. Ա. Առաքելյանին:
- Հաստատել արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ Կարեն Բաղդասարյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «Խաղի կոնցեպցիան Խուլիո Կարտասարի վեպերում»՝ Ժ.01.07 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել Բ.Գ.Պ., պրոֆ. Տ. Սիմյանին:
- Հաստատել արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ Արեգա Համբարձումյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «Մեղքի գաղափարը Ջեյմս Ջոյսի և Ուիլյամ Ֆոլկների վեպերում»՝ Ժ.01.07 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել Բ.Գ.Պ., դոց. Ա. Առաքելյանին:
- Հաստատել արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ Անի Համբարձումյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «Կոմեդիա դ'ել Արտեի վերախմաստավորումը 20-րդ դարի իտալական դրամատուրգիայում»՝ Ժ.01.07 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել Բ.Գ.Պ., պրոֆ. Տ. Սիմյանին:
- Տպագրության երաշխավորել անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, Բ.Գ.Թ. Նաիրա Գասպարյանի թարգմանած «Ճամփորդությունն ու քաղաքականությունը Հայաստանում» /հեղինակներ՝ Նոել Բաքստոն և Հարոլդ Բաքստոն/ փաստագրական գիրքը:

Գիտխորհրդի նախագահ՝

Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝

Գ. Մուրադյան

24 փետրվարի 2017թ.